ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, Երևան, Մաշտոցի պող. 47

«____» _____ 20 թ.

Հ _____

ՀԵՏՔ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԼՐԱԳՐՈՂ ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղուկասյան,

Հանրապետության նախագահի աշխատակազմը սկզբունքորեն առարկություն չունի Բաղրամյան 26 հասցեում տեղակայված վարչական շենքում լուսանկարահանումներ իրականացնելու առումով: Սակայն, հարկ ենք համարում նշել, որ հիշյալ հասցեում տեղակայված շենք-շինությունները հանձնման-ընդունման ակտով դեռևս չեն փոխանցվել Հանրապետության նախագահի աշխատակազմին և այնտեղ գործում են վարչապետի աշխատակազմի մի շարք ստորաբաժանումներ, իսկ Հանրապետության նախագահի աշխատակազմն ամբողջությամբ գործում է Մաշտոցի 47 հասցեում տեղակայված վարչական շենքում:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բաղրամյան 26 հասցեում տեղակայված վարչական շենք մուտք գործելու թույլտվության հայտ ներկայացնելու իրավունք նախագահի աշխատակազմին դեռևս վերապահված չէ:

Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի և Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի համատեղ հրամանով հաստատված անցագրային և ներքին ռեժիմի իրավակարգավորումները վերաբերում են միայն Մաշտոցի 47 հասցեում գտնվող վարչական տարածք մուտքին և ելքին:

Հարգանքով՝

Է. ՏԱՐԱՍՅԱՆ

Կատարող՝ Հ. Հովակիմյան

Հեռ. 59-30-21